

« ԷԶՄԻԱԾԻՆ » ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԲԵՄԱԿԱՆԱՑՈՒՄ ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԷՋ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԴԵՐՁԱԿԵԱՆ

Հիւսիսային Ամերիկայի եկեղեցւոյ 110-րդ ու Գանատայի Առաջնորդութեան 25-րդ հիմնադրութեան տարեդարձներուն նուիրուած « Էջմիածին » երաժշտական բեմադրութիւնը որ Հայաստանեայց եկեղեցւոյ մշակութային հարստութիւնը եւ քրիստոնեայ ազգին ծնունդը կը ներկայացնէր, տեղի ունեցաւ 27 Յունիս 2009 Շաբաթ, « Տը Կլոպըլ Զինկտըմ Մինիսթրի » եկեղեցւոյ սրահին մէջ աւելի քան 600 երաժշտասերներու ներկայութեամբ:

Այս երեկոյթը, որ Գանատահայոց Առաջնորդ՝ Գերշ. Տ. Բագրատ Ս. Եպս. Գալստանեանի հովանաւորութիւնը ու նախագահութիւնը վայելէր, կազմակերպուած էր Առաջնորդարանի հովանիին տակ գործող « Կատարողական Արուեստներու Գանատահայ Ընկերակցութեան » (CAAPA) կողմէ, մասնակցութեամբ՝ Օնթարիոյի Գանատահայ թեմի եկեղեցիներու:

Այս յաջող ձեռնարկը անցեալ տարի Յունիսին, Կաթողիկէ Ս. Էջմիածնի Տօնի առիթով առաջին անգամ ըլլալով Սոնրեալի մէջ ներկայացուած էր: Այնպէս որ կազմակերպիչները տեղին կարգադրութեամբ այս տարի որոշած էին նոյն յայտագիրը կրկնել Թորոնթոյի մէջ:

Բեմադրութեան իրենց մասնակցութիւնը բերին հիւրաբար Սոնրեալէն ժամանած Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ « Կոմիտաս » երգչախումբը, « Գառնի » պարախումբը, անհատ արուեստագետներ եւ ասմունքողներէ բաղկացած մօտաւորապէս 120 հոգի, որոնք բեմի վրայ իրենց գեղեցիկ երգերով, պարերով եւ արտասանութիւններով ներկայացուցին մեր 1700 տարուայ պատմութեան հանգրուանները, սկսեալ Տրդատ Թագաւորէ, Սուրբ կոյսերու նահատակութիւնը, քրիստոնէութեան պետական պաշտօնական կրօնք դառնալը, Վարդանանց պատերազմը, Սարտարապատը եւ Հայաստանի վերածնունդը:

Այս բոլորին յղացումը եւ գործադրութիւնը կատարուած էր Բագրատ Սրբազանի կողմէ: Մինչ այդ, եկեղեցւոյ երկու պատերուն վրայ զետեղուած զոյգ սպիտակ պաստառներու վրայ սահիկներով կը ցուցադրուէին հայոց պատմութեան դրուագներէն զանազան նկարներ ու տեսարաններ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Վազգէն Ա. Վեհափառի պատգամը պաստառի վրայ ներկայացուելէ ետք, երկու երիտասարդ հանդիսավարներ՝ Սարօ Խաչատուրեան (հայերէն), Սալի Սահակեան (անգլերէն) արտայայտուեցան Կաթողիկէ Ս. Էջմիածնի Տօնի մասին եւ հակիրճ ձեւով անդրադարձան օրուայ յայտագրին:

Սուրբ Էջմիածինը դարեր շարունակ հանդիսացաւ հայ դպրութեան եւ հայ հաւատքին ծառայող հոգեւոր կռուանը, որ դարձաւ մեր ազգային դաւանանքին, հաւատամքին կենսունակութիւն ներարկող ուժը:

Հանդիսավարի կողմէ յայտարարուեցաւ նորոք վախճանեալ՝
Գերշ. Տ. Ներսէս Ա. Արք. Պօգապալեանի մահուան տխուր գոյժը որ պատահած էր նոյն
առաւօտ, լուրը մեծ ցաւ պատճառեց բոլոր ներկաներուն: Այս առթիւ ի յարգանս
Սրբազան հօր, մէկ վայրկեան յոտնկայս լռութիւն պահուեցաւ:

Յայտագիրը սկսաւ Վիկտորիա Տիգրանեանի « Սուրբ Էջմիածին » ասմունքով,
եւ Գառնի Պարախումբի « Տրդատ Արքայի Սուտք » ու:

Գառնի Պարախումբէն Նայիրի Մանուկեան, ԳլօԷ Պալեան եւ Սիլվա Յակոբեան
իրենց պարերով ներկայացուցին « Սուրբ Կոյսերու Նահատակութիւն » ը:

Կոմիտաս Երգչախումբը հանդէս եկաւ Ա. Հռիփսիմեանց « Անծինք Նուիրեալք »
եւ Ա. Գրիգոր Լուսաւորչի « Այսօր Չուարճացեալք » շարականներով:

Գառնի Պարախումբը « Արքայի Խելագարութիւնը » ներկայացնելէ ետք,
երգչախումբը յաջորդաբար հանդէս եկաւ Կոմիտաս Վարդապետի կողմէ մշակուած
« Տէր Ողորմեա », Վարդան Սարգիսեանի մշակած « Ուրախ լէր », երաժշ. Մարի
Պօգապալեանի « Էջմիածին » եւ Խորէն Մէլիսանեճեանի մշակած « Էջմիածին ի Հօրէ »
շարականներով, Սարգիս Պարսըմեան գեղեցիկ ձայնով երկու երգերուն իր
մասնակցութիւնը բերաւ:

Լորի Պօյաճեան գեղեցկօրէն ասմունքեց « Դէպի Էջմիածին » քերթուածը:
Կոմիտաս Երգչախումբի կողմէ երգուեցաւ Վահան Թէքեանի բառերուն վրայ գրուած,
երաժշ. Վահան Յ. Պետելեանի կողմէ դաշնաւորուած « Եկեղեցին հայկական » ծանօթ
կտորը:

Յայտագրի երկրորդ մասը սկսաւ գրերու գիւտով, Արշակ Կայծունիի
« Դէպի Էջմիածին » քերթուածէն Անի Դանիէլեան եւ Լորի Պօյաճեան պարբերաբար
հատուածներ արտասանեցին անթերի մեկնաբանութեամբ:

Գառնի պարախումբի կողմէ « Գրերու գիւտ » ը ներկայացուելէ ետք,
Կոմիտաս Երգչախումբը մեկնաբանեց Վարդան Արեւելցիի « Որք Չարդարեցին »
Ա. Թարգմանչաց շարականը:

Վարդանանքը ներկայացուեցաւ Երգչախումբի կողմէ երգուած՝
Ներսէս Շնորհալիի « Արեգակն արդարութեան » եւ « Նորահրաշ պսակաւոր »
Ա. Վարդանանց շարականներով, ինչպէս նաեւ Գառնի պարախումբի կողմէ
Ա. Խաչատուրեանի նշանաւոր « Սուրերու պար » ելոյթով: Այս պարին գլխաւոր
դերակատարն էր Մարի Փիւնաճեան:

Գեղամ Մարտիրոսեան Գեորգ Ե. Կաթողիկոսի խօսքը ներկայացուց,
իսկ յաջորդաբար ելոյթ ունեցան Գառնի պարախումբը « Սարտարապատ » ու,
ծանօթ երգիչ Կարօ նշանեան՝ ընկերակցութեամբ Կոմիտաս Երգչախումբին
ներկայացուց Պարոյր Սեւակի « Սարտարապատ » կտորին վրայ Էտկար
Հովհաննիսեանի երաժշտական յօրինումը:

Ապա բեմ բարձրացաւ Սաշա Ճիհանեան որ ներկայացուց « Էջմիածին » շարականը, որուն երաժշտութիւնը կատարուած է Ա. Մինասեանի, իսկ մշակումը՝ Շ. Վարդանեանի կողմէ:

Անի Դանիէլեան ասմունքեց Արշակ Կայծունիի « Դեպի Էջմիածին » կտորէն զանազան հատուածներ: Երգչախումբը ներկայացուց « Ամէն հայի » Հայրապետական Օրհներգը, ինչպէս նաեւ Սահակ Գ. Ձորափորեցիի « Էջմիածին ի հօրե » շարականը, մշակուած՝ Խորէն Մէլիսանեանի կողմէ:

Այս բացառիկ երեկոն իր ամարտին հասաւ Վահան Անդրեասեանի բառերուն վրայ Արմէն Սմբատեանի կողմէ յօրինուած « Հայաստան » երգով: Մենակատարներն էին՝ Սարգիս Պարսըմեան, Բիւր Գեորգ, ԳլօԷ Պալեան, Սաշա Ճիհանեան եւ Սանտրա Աֆէյեան, որոնք իրենց գեղեցիկ ձայներով փայլ մը տուին եկեկոյթին: Ընդառաջելով ներկաներու յոտնկայս ջերմ ծափահարութիւններուն այս երգը կրկնուեցաւ:

Այնուհետեւ Բագրատ Սրբազան բեմ բարձրանալով փոխանցեց իր սրտի խօսքը, շնորհաւորեց մասնակից բոլոր արուեստագետները ու շնորհակալութիւն յայտնեց կարգադիր յանձնախումբի անդամներուն, որոնք մեծ ջանք թափած էին ձեռնարկին յաջողութեան համար:

Ներկաներ այս բարձրորակ ներկայացումի շնորհիւ էջ առ էջ ապրեցան մեր դարաւոր պատմութիւնը ու սրտի անհուն գոհունակութեամբ մեկնեցան սրահէն:

* * * *

Կիրակի առաւօտ Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ պատարագեց ու քարոզեց Առաջնորդ՝ Բագրատ Սրբազան, իրեն առընթերակայ ունենալով եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Տ. Չարեհ Ա. Քիւյ. Չարգարեան եւ Հայր Տաճատ Աբոյ. Ծատուրեանը:

Երգեցողութիւնները ներդաշնակ կերպով կատարուեցան Մոնրեալի « Կոմիտաս » եւ Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ միացեալ դպրաց դասերու կողմէ, խմբավարութեամբ՝ Շահէ Ալթունեանի եւ Բկր. Վարուժան Կիւ. Սրկ. Մարգարեանի, երգեհոնի ընկերակցութեամբ՝ Սոնա Արթինեանի:

Յընթացս Ս. պատարագի ձեռամբ Սրբազան հօր, օրհնութիւնը կատարուեցաւ զանազան կազմակերպութիւններու մաս կազմող հայ երիտասարդներու:

Բագրատ Սրբազան իր քարոզին մէջ մասնաւորաբար ծանրացաւ երջանկայիշատակ Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հոգեւոր ծառայութեան վրայ, իր անձէն օրինակներ տուաւ երիտասարդներուն:

Յաւարտ Ս. Պատարագի տեղի ունեցաւ մասնաւոր Հոգեհանգստեան Պաշտօն, Երանաշնորհ Գարեգին Ա. Վեհափառ Հայրապետի Վախճանման 10-րդ տարելիցին առթիւ: